ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ս. Ա. ՌԻԶԱԵՎ

Հայ արվեստագիտությունը որպես գիտության ինքնուրույն բնագավառ կազմավորվել և զարգացել է վերջին կես դարի ընթացքում։

Սովետահայ արվեստագիտության ձևավորման ուղիները հարթ ու հանդիստ չեն եղել. հայ արվեստի պատմության ու տեսության խնդիրները խմորվել են հասարակական մտքի զարգացման ընդհանուր պրոցեսում, անդրադարձրել ու արտահայտել այդ ընթացքի առանձնահատկությունները։ Մարքս-Լենինյան տեսության դիրքերից արվեստագիտությունը ոչ միայն վերանայել է անցյալում ստեղծված ըմբռնումները, այլև հայ արվեստի ծագման ու պատմական զարգացման վերաբերյալ առաջ է քաշել բոլորովին նոր ու ինքնուրույն տեսակետներ։

Հարուստ ու բովանդակալի ուղի են անցել հայ արվեստագիտության բոլոր ճյուղերը։

Ճարտարապետություն. Հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրությունն ունի շուրջ մեկ և կես դարի պատմություն։ Անցյալ դարի առաջին կեսին Հայաստան են այցելում Դյուբուան, Տեքսիեն, Մուրավյովը, որոնք և առաջին անգամ գիտական հասարակությանը ներկայացրին հայ ժողովրդի բազմադարյան կառուցողական արվեստի նմուշները։ XIX դ. երկրորդ կեսին ղդալի դործ կատարեց արևելագետ Բրոսեն, որը, վրացական և հայկական բանասիրության բնագավառում ձեռնարկած հետազոտություններին զուգընթաց, ղբաղվեց ճարտարապետական հուշարձանների և վիմագրական արձանագրությունների հետազոտությամբ։ Հիշատակության արժանի է նաև տեղի դործիչների (Շահխաթունյան, Սարգսյան, Ջալալյան) կատարած աշխատանքը։ Մեծ էր Ղ. Ալիշանի, հետագայում Ե. Լալայանի տեղագրական աշխատությունների նշանակությունը։

Հայկական ճարտարապետության ուսումնասիրության բնագավառում նոր էջ բացվեց, երբ սկսվեցին Անիի պեղումները (1892—1894, 1904—1917)։ Հայտնաբերվեցին միջնադարյան նշանավոր քաղաքի մոնումենտալ կառույցները, հիմք դրվեց դրանց գիտական հետազոտությանը։

Նիկողայոս Մառը, որ ղեկավարում էր այդ աշխատանքը, աստիճանաբար լայնացնում է հետազոտության շրջանակները, պեղումներ ձեռնարկում ոչ միայն Անիի շրջակայքում (Երերուք), այլև հեռու վայրերում (Գառնի, Վան)։ Նրա անմիջական օգնականն էր Հովսեփ Օրբելին։ Մառի հետ էր աշխատում Թորոս Թորամանյանը, որը 1904 թ., դալով Հայաստան, անգնահատելի ավանդ մուծեց հայ ճարտարապետության հուշարձանների ուսումնասիրության գործում։ Նրա նշանավոր մենագրությունները և չափագրությունները առաջադրում էին հայ ճարտարապետության պատմության չափազանց կարևոր հարցեր։ Պատահական չէր արևմտաեվրոպական գիտության նշանավոր ներկայացուցիչներից Հովսեփ Ստրժիգովսկու ցանկությունը՝ համատեղ մենագրություն հրատարա-

կել հայ ճարտարապետության պատմության վերաբերյալ։ Սակայն առաջին համաշխարհային պատերազմը ձախողեց դա, և Ստրժիգովսկին ինքնուրույն հրատարակեց իր նշանավոր երկհատոր գործը („Die Baukunst der Armenien und Europa", Wien, 1918), լայնորեն հենվելով Թորամանյանի դրույթների վրա, ինչպես և օգտագործելով նրա բազմաթիվ չափագրությունները։

Հայկական ճարտարապետության պատմության հետագա ուսումնասիրությունը անասելիորեն դժվարացնում է ինչպես Անիում ստեղծված թանգարանների ավերումը թուրքերի կողմից, այնպես էլ գիտահետազոտական նյութերի կորուստը քաղաքացիական պատերազմի տարիներին։ Սակայն, չնայած դրան, սովետական կարգեր հաստատվելու առաջին օրերից նորից վերսկսվեցին գիտական հետազոտությունները, որոնք թեև համեստ էին, բայց մեծ ապագա էին խոստանում։ Մառը գործունեություն է ծավալում Լենինգրադում, նյութական մշակույթի պատմությունն ուսումնասիրող ինստիտուտի շրջանակներում իր շուրջը համախմբելով Անիի գիտարշավի նախկին մասնակիցներին, աճեցնելով նորանոր երիտասարդ կադրեր։

1923 թ. Հայաստան է գալիս Ն. Տոկարսկին և հետազոտում բազմաթիվ հուշարձաններ։ 1936 թ. ծավալվում են Ամբերդի նշանավոր պեղումները Հովսեփ Օրբելու գլխավորությամբ։ Պեղումներին մասնակցող մասնագետները (Բ. Պիոտրովսկի, Ն. Տոկարսկի, Կ. Տրեվեր, Ա. Յակոբսոն, Ս. Երեմյան և ուրիշներ) ընդամենը մեկ տասնամյակ հետո պետք է գլխավորեին նշանավոր նոր հետազոտություններ, դառնային խիստ արժեքավոր աշխատությունների հեղինակներ։

1920-ական թթ. Անիի գիտահետազոտական ինստիտուտի բազայի վրա Թիֆլիսում հիմնվում է Կովկասի պատմա-հնագիտական ինստիտուտը, որը որոշ աշխատանքներ է ծավալում նաև հայկական հուշարձանների ուսումնասիրության ուղղությամբ։ Երևանում հիմնված ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտը իր շուրջն է համախմբում պատմությամբ, հնագիտությամբ, ճարտարապետությամբ և արվեստագիտությամբ զբաղվող գիտնականներին. հայկական ճարտարապետության պատմության հարցերը զգալի տեղ են գրավում այս ինստիտուտի աշխատանքներում։ Իրենց բեղմնավոր գործունեությունն են շարունակում Թ. Թորամանյանը, Գարեգին Հովսեփյանը, Գարեգին Լեոնյանը։ Զգալի աշխատանք է ծավալում հնությունների պահպանության կոմիտեն։ Այստեղ են համախմբվում հայկական ճարտարապետության պատմությամբ զբաղվող փոքրաթիվ գիտնականները։ Այդ տարիներին հայկական ճարտարապետության պատմության ուսումնասիրության մի այլ կենտրոն էր պետական պատմական թանգարանի ճարտարապետության բաժինը, որի աշխատանքները ընթանում էին Թ. Թորամանյանի գլխավորությամբ։

Անհրաժեշտ է նշել ականավոր հայագետ Գարեգին Հովսեփյանի ծավալած գործունեությունը, որի աշխատությունները՝ նվիրված ընդհանրապես հայ ժողովրդի պատմության այս կամ այն հանգուցային հարցին, սերտորեն շաղկապվում են նաև ճարտարապետության պատմությանը։

1930-ական թթ. սկզբին պրակտիկ մեծ գործունեությանը զուգընթաց, հետազոտական զգալի աշխատանքներ են ձեռնարկում Մ. Մաղմանյանը, Ն. Բունիաթյանը։ Վերջինս հանգամանորեն հետազոտել է Գառնիի հեթանոսական տաճարը, կատարել վերակազմության նախագիծ և փորձեր ձեռնարկել տա-

ճարի վերակառուցման ուղղությամբ[1]։ 1934 թ. լույս տեսավ Ն. Մառի Անիի պեղումների սեղմ ամփոփումը, նշանավոր մի գործ, որը առ այսօր սեղանի գիրք է բոլոր նրանց համար, ովքեր այս կամ այն ձևով անդրադառնում են հայ ճարտարպետության պատմության հարցերին[2]։ Իր մեծ ուսուցչի գործն էր շարունակում Հ. Օրբելին, որը, գլխավորելով տարբեր վայրերում ձեռնարկված պեղումները, լույս է ընծայում մի շարք խիստ արժեքավոր հոդվածներ, որտեղ մասնավորապես նշում է հայկական ճարտարապետության որոշիչ դերը սելջուկյան ճարտարապետության կազմավորման գործում[3]։

Հայկական ճարտարապետության պատմության, նրա ակունքների բացահայտման ուղղությամբ մեծ նշանակություն ունեցան 1930-ական թթ. վերջերից սկսված մի շարք պեղումներ (Կարմիր բլուր, Դվին, հետագայում՝ Ետպատերազմյան շրջանում Գառնի, Էրեբունի, Արդիշտիխինիլի և այլն)։ Հայրենական մեծ պատերազմից հետո այդ աշխատանքները ավելի լայն ծավալ ստացան և, ինչպես ժամանակին Ն. Մառի պեղումները Անիում, դարձան գիտական կադրերի պատրաստման նշանակալից կուվաններ։

1940-ական թթ. կեսերից լույս է տեսնում մենագրական ուսումնասիրությունների և հետազոտական ակնարկների մի ամբողջ շարք՝ նվիրված ճարտարապետության պատմության ամենաբազմաբարբեր հարցերին։ Սովետահայ գիտնականներին հետաքրքրում են ինչպես ճարտարապետության ակունքների հետ առնչվող ընդհանուր հարցեր, այնպես էլ առանձին հուշարձանների տեղը ճարտարապետության պատմության մեջ։

Պատահական չէ բնավ, որ հայ ճարտարապետության պատմության հարցերը շոշափող առաջին աշխատությունները սերտորեն առնչվում են պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերի հետ։

Դեռևս պատերազմի ծանր տարիներին հրապարակվեց Թ. Թորամանյանի ժառանգության հիմնական մասը[4]։

Հայ ճարտարապետության ակունքների պրոբլեմը սերտորեն առնչվում է հին արևելյան, հատկապես ուրարտական ճարտարապետության պատմության հետ, այս առումով էլ առաջնակարգ նշանակություն ստացան ուրարտական նշանավոր կենտրոնների՝ Թեյշեբաինիի և Էրեբունիի պեղումների նյութերի հետազոտությունն ու հրատարակությունը[5]։ Վաղ հայկական շրջանի ճարտարապետական մշակույթը մինչև վերջին ժամանակներս համարյա դուրս էր մնացել հետազոտողների ուշադրությունից, այս տեսակետից մեծ արժեք են ներ-

---

1 Ն. Բունիաթյան, Հեթանոսական տաճար Տրդատի պալատին կից Գառնի ամրոցում (հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն), Երևան, 1933։

2 Н. Я. Марр, Ани, книжная история города и раскопки на месте городища, М., 1934.

3 «Памятники эпохи Руставели, под редакцией И. А. Орбели», Л., 1938; И. А. Орбели, Проблема сельджукского искусства, III Международный конгресс по иранскому искусству и археологии, Доклады, М.– Л., 1939.

4 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. 1, Երևան, 1942, հատ. 2, Երևան, 1948։

5 Б. Б. Пиотровский, Кармир Блур, I, Ереван, 1950; II, 1952; III, 1955; Նույնի՝ Ванское царство (Урарту), М., 1959; Նույնի՝ Искусство Урарту, Л., 1962. К. Л. Оганесян, Архитектура Тейшебаини, Ереван, 1955; Նույնի՝ Архитектура Эребуни, Ереван, 1961. А. А. Мартиросян, Город Тейшебаини, Ереван, 1961.

կայացնում Գառնիի հեթանոսական նշանավոր տաճարի պեղումները[6] և այդ շրջանի մշակույթին նվիրված հետազոտություններն ընդհանրապես[7]։

Առանձնակի տեղ է գրավում հայկական միջնադարյան ճարտարապետության հետազոտությունը, ընդ որում բնորոշ է, որ այստեղ ևս հիմնականում նախապես կատարվում է պեղումների ժամանակ հայտնաբերված նյութերի վերլուծություն[8] և հետո միայն ուսումնասիրողները ձեռնարկում են ընդհանրացնող գործերի։ Ճարտարապետական գիտության նման զարգացումը միանգամայն տրամաբանական է և հասկանալի։ Դեռևս առանձին մենագրական հետազոտությունների ժամանակը չէր և պետք էր նախնական ընդհանուր պատկերացում մշակել հայ ճարտարապետական մտքի զարգացման մասին։ Եվ ահա մեկը մյուսի ետևից լույս են տեսնում գործեր, որոնցից ամեն մեկը յուրովի տեղ ունի հայ ճարտարապետության պատմության մեջ[9]։

Հաջորդ հիմնական բնագավառը միջնադարյան հայ ճարտարապետության առանձին հարցերի հետազոտությունն է։ Նման հետազոտություններում վեր են հանվում նրա առնչություններն ու կապերը, զարգացման տարբեր շրջաններն ու ֆեոդալական առանձին կազմավորումներում ստեղծված դպրոցները[10]։ Առանձնակի տեղ է գրավում միջնադարյան ճարտարապետների ստեղծագործությունների հետազոտությունը[11]։

1950-ական թթ. սկսած նկատելի է հակումը դեպի առանձին հուշարձանների հետազոտությունը։ Լույս են տեսնում մի շարք աշխատություններ՝ նվիրված այս կամ այն նշանավոր հուշարձանին[12]։ Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև այս կամ այն ճարտարապետական կոմպլեքսի վիմական արձանագրությունները, որոնք շատ բան են պարզում հուշարձանների կառուցման ժամանակի վերաբերյալ[13]։ Հրապարակվում են Ն. Մառի և Հ. Օրբելու

---

6 Б. Н. Аракелян, Гарни, I, Ереван, 1951; II, 1957.

7 К. В. Тревер, Очерки по истории культуры Древней Армении, М.—Л., 1953.

8 Վ. Հարությունյան, Դվինի V—VII դարերի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950։ Նույնի՝ Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1950։ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952։

9 Н. М. Токарский, Архитектура Древней Армении, Ереван, 1946; Նույնի՝ Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961; А. Л. Якобсон, Очерки истории зодчества Армении V—XVII вв., М.—Л., 1950; В. М. Арутюнян, С. А. Сафарян, Памятники армянского зодчества, М., 1951; Н. Г. Бунятов, Ю. С. Яралов, Архитектура Армении, М., 1950; О. Х. Халпахчян, Архитектура Армении, Всеобщая история архитектуры, т. I, М., 1958, т. II, М., 1963.

10 Р. Я. Агабабян, Композиция купольных сооружений Грузии и Армении, Ереван, 1950; С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952; Ю. С. Яралов, Аштарак, М., 1947; О. Х. Халпахчян, Армяно-русские культурные отношения и их отражение в архитектуре, Ереван, 1957; Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960։ Նույնի՝ «Անի քաղաքը», Երևան, 1966։ Ս. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960։ Ս. Վարդանյան, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետությունը, Երևան, 1959։

11 К. Л. Оганесян, Зодчий Трдат, Ереван, 1951; Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963։

12 Ա. Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955։ А. Еремян, Храм Рипсимэ, Ереван, 1955; Տ. Մարության, Զվարթնոց, Երևան, 1963։

13 Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948։ Նույնի՝ Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957։ Նույնի՝ Հաղբատ, ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Երևան, 1963։

չհրատարակված գործերը[14], ինչպես և նրանց տեսակետներին և գիտական գործունեությանը նվիրված աշխատություններ[15]։

Նշված աշխատություններից ընույթով խիստ տարբերվում է Բ. Առաքելյանի, Վ. Հարությունյանի և Ստ. Մնացականյանի գրած գիրքը[16], որտեղ քննադատվում են հայ ճարտարապետության պատմության վերաբերյալ Գ. Չուբինաշվիլու անհիմն ու սխալ տեսակետները։

Հայկ. ՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և իտալական գիտական հաստատությունների համագործակցության շնորհիվ Միլանում իտալերեն և անգլերեն լեզուներով հրատարակվում է հայկական ճարտարապետության հուշարձաններին նվիրված մենագրությունների մի շարք, որից երեքը արդեն լույս են տեսել[17]։

Այս ամենը, անշուշտ, չէր կարող իրականացվել առանց համապատասխան բարձրորակ մասնագետների։ Ճարտարապետական գիտական կադրերի պատրաստման բնագավառում մեծ գործ են կատարել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը և Հայկ. ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտին կից 1940-ական թթ. առաջին կեսին բացված ասպիրանտուրան։ Պատմության ինստիտուտին կից արվեստի պատմության բաժինը 1948 թ. ձևավորվեց որպես արվեստի սեկտոր, իսկ տասը տարի հետո վերածվեց ինստիտուտի, մի հաստատություն, որը և դարձավ հայ ճարտարապետության պատմության գծով կատարվող հետազոտությունների հիմնական կենտրոնը։

Ճարտարապետության պատմության ուսումնասիրությամբ զբաղվում են նաև Հայաստանի ճարտարապետների միությունը, Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ամբիոնը, Հայկ. ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը, որի գործունեությունը սերտորեն կապված է ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրության հետ։ Այս առումով առանձնակի տեղ է գրավում Հայկ. ՍՍՀ պետշինի ճարտարապետական հուշարձանների պահպանության վարչության և նրա պատմա-ճարտարապետական հուշարձանների գիտա-ռեստավրացիոն հատուկ արվեստանոցը, որոնց գործունեությունը մեծապես նպաստում է հայկական ճարտարապետության պատմության ուսումնասիրության առաջընթացին։ Ամեն տարի նորանոր հուշարձաններ են հայտնաբերվում, նորանոր կառուցվածքներ մաքրվում դարերով կուտակված հողի շերտերից։ Այս հաստատության գործունեության հետ են առնչվում ճարտարապետական հուշարձանների պահպանության կամավոր ընկերության աշխատանքները։

Դեռևս մեկ դար առաջ Պետերբուրգում հիմք դրվեց հայագիտական հետազոտությունների, և այդ գործը արգասաբեր հետևանքներ ունեցավ տաս-

---

[14] Н. Я. Марр. Ереруйкская базилика, Ереван, 1969; И. А. Орбели, Избранные труды, т. I, М., 1968.

[15] *Ստ. Մնացականյան, Նիկողայոս Մարը և հայկական ճարտարապետությունը, Երևան, 1969։*

[16] Б. Н. Аракелян, В. М. Арутюнян, С. Х. Мнацаканян, О некоторых вопросах истории армянской архитектуры (по поводу книги Г. Н. Чубинашвили «Разыскания по армянской архитектуре), Ереван, 1969.

[17] St. Mnazaganian, Adriano Alpago-Novello, Hakhpat, Milano, 1968 L. Azarian, A. Manukian, Khatchcar, Milano, 1969. Adriano Alpago-Novello, O. Kh. Ghalpakhtchian, Milano, 1970.

նամյակներ շարունակ։ Վերը նշվեց Ն. Մառի, Հ. Օրբելու և նրանց գործակիցների մեծ աշխատանքը։ Այդ ավանդները շարունակվում են նաև հետագայում, և պետական էրմիտաժը դառնում է հայագիտության, մասնավորապես հայկական ճարտարապետության պատմության հետազոտության հիմնական կենտրոններից մեկը։ Ակադեմիկոս Հ. Օրբելու ղեկավարությամբ այստեղ իրենց գործունեությունն են ծավալում հետագայում ճանաչված գիտնականներ Պիոտրովսկին, Կ. Տրեվերը, Ս. Տոկարսկին, Ա. Յակոբսոնը և ուրիշներ, որոնք, գլխավորելով հայկական հուշարձանների պեղումները՝ մեծ ավանդ են մուծում հայ ճարտարապետության ուսումնասիրության գործում։

Հայկական ճարտարապետության ուսումնասիրության մի այլ կենտրոն է Մոսկվայի ճարտարապետության պատմության, տեսության և հեռանկարային պրոբլեմների ինստիտուտն է, որտեղ գիտական գործունեություն են ծավալում ճարտարապետության դոկտորներ Հ. Ղալփաղչյանը և Յու. Յարալովը։

Արվեստի ինստիտուտն այժմ ձեռնարկել է հայկական ճարտարապետության պատմության չորսհատորյակի նախապատրաստումը. աշխատությունը պետք է քննության առնի հայ ճարտարապետության զարգացման ողջ ընթացքը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը։ Ապագայում կպատրաստվի «Ղիվան հայ ճարտարապետության հուշարձանների» բազմահատոր աշխատությունը, որտեղ կներկայացվեն ճարտարապետական բոլոր հուշարձանները՝ սեղմ նկարագրությամբ և գիտական հակիրճ բնութագրությամբ։

Երաժշտագիտություն. Սովետական տարիների հայ երաժշտության զարգացման գործում կարևոր դեր է կատարել երաժշտագիտությունը։ Այդ տարիներին մեծ թափ է ստացել ինչպես երաժշտական քննադատությունը, որը մամուլի էջերում անմիջապես արձագանքել է երաժշտական կյանքի հրատապ խնդիրներին, այնպես և երաժշտական ֆոլկլորիստիկան ու երաժշտագիտությունը, որ ուսումնասիրում է ազգային երաժշտական արվեստի պատմությունն ու տեսությունը։

Առաջին շրջանում երաժշտագիտության բնագավառում նշանակալից էր Վ. Կորգանովի և Ս. Մելիքյանի գործունեությունը։ Կորգանովը, աշխատելով Երևանի կոնսերվատորիայում որպես պրոֆեսոր-կոնսուլտանտ, 1920-ական թթ. հրապարակում է մի շարք հոդվածներ։ Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նրա «Հիշողությունները»[18]։

Շարունակելով Կոմիտասի ավանդները, Ս. Մելիքյանը մեծ ուշադրություն է նվիրում հայկական ժողովրդական երաժշտության հավաքմանն ու ուսումնասիրմանը։ Նրա գրչին են պատկանում նաև մի շարք տեսական և պատմական բնույթի աշխատություններ[19], որոնցից «Ուրվագիծ հայ երաժշտության պատմության» դիրքը, որ հրատարակվեց 1935 թ., այդ բնագավառում առաջին ընդհանրացնող ուսումնասիրությունն էր։ Գրքում ընդգրկված է հետաքրքիր և նոր փաստական նյութ, սակայն սխալ է հեղինակի գաղափարական և մեթոդաբանական դիրքավորումը, որտեղ արտահայտվել են այդ տարիներին լայն տարածում գտած զուտհիկ սոցիոլոգիական դրույթներ։

---

18 Հետմահու հրատարակվել է մի մասը՝ «Чайковский на Кавказе», Ереван, 1940.

19 Ս. Մելիքյան, Կոմիտասի ստեղծագործությունների անալիզը, Երևան, 1932։ Նույնի՝ Հայ ժողովրդական երգի դամմանները, Երևան, 1930։

1930-ական թթ. հանրապետության երաժշտական մտքի աշխուժացմանը որոշակիորեն նպաստեցին Երևանի կոնսերվատորիային կից ստեղծված գիտահետազոտական կաբինետը (1934 թ.), որին հետագայում տրվեց Ռոմանոս Սելիքյանի անունը, կոնսերվատորիայում կազմակերպված երաժշտագիտական բաժանմունքը և «Խորհրդային արվեստ» ամսագիրը։ Ամսագրի էջերում մասնավորապես աշխույժ բանավեճեր են ծավալվում անցյալի երաժշտական ժառանգության գնահատման և այլ հարցերի շուրջ։ Այդ տարիներին մամուլում ակտիվ ելույթներ էին ունենում երաժշտագետներ Ռ. Թերլեմեզյանը, Ա. Հաբությունյանը, Ս. Գասպարյանը, Ջ. Վարդանյանը, Ա. Քոչարյանը, Ա. Տոնիկյանը, Խ. Թոռջյանը և ուրիշներ։ Կոմիտասի, Սպենդիարյանի, Կարա-Մուրզայի և այլոց ստեղծագործությունների հրատարակության նախապատրաստման համար լուրջ աշխատանք կատարեց Ռ. Թերլեմեզյանը։

Այդ ժամանակ գրված համեմատաբար նշանակալից ուսումնասիրություններից էր Հ. Հովհաննիսյանի «Հայ երաժշտության պատմությունը», որը, սակայն, չի հրատարակվել. աշխատությունից լայնորեն օգտվել են մեր երաժշտագետները։

1920—1930-ական թթ. հայկական երաժշտագիտությունը նշանակալից հաջողությունների հասավ։ Սակայն հետազոտական աշխատանքում բացակայում էին անհրաժեշտ պլանավորումն ու պարբերականությունը։ Նման աշխատանքի համար համապատասխան պայմաններ ստեղծվեցին ավելի ուշ. դա կապված էր հատուկ գիտահետազոտական կենտրոնի ստեղծման (Հայկ. ՍՍՀ ԳԱ երաժշտության տեսության և պատմության սեկտոր՝ 1944 թ., հետագայում՝ ԳԱ արվեստի ինստիտուտի երաժշտության սեկտոր), ինչպես և մեծ թվով շնորհալի երաժշտագետների հանդես գալու հետ։

1940-ական և հատկապես՝ 1950—1960-ական թթ. հրատարակվեցին մի շարք աշխատանքներ՝ նվիրված հայ երաժշտության պատմության և տեսության տարբեր հարցերին։

Բացառիկ արժեք է ներկայացնում Ք. Քուշնարյանի «Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցերը»-[20] աշխատությունը, որը հեղինակի երկարամյա և լարված հետազոտական աշխատանքի արդյունքն է։ Նյութի ընդգրկման, ընդհանրացումների համարձակության և գիտական խորության առումով այն նշանակալից ուսումնասիրություն է ոչ միայն Հայաստանում, այլև Սովետական Միության մեջ։

Քուշնարյանի աշխատանքը բաղկացած է երկու ընդարձակ բաժնից։ Առաջինում հեղինակը շարադրում է հայկական մոնոդիկ երաժշտության զարգացման պատմությունը նրա սկզբնավորումից։ Իր եզրահանգումներում հեղինակը հենվում է ոչ միայն իր կողմից մանրակրկիտ ուսումնասիրված անցյալի պատմական և գրական աղբյուրների վրա, այլև առաջին անգամ հայ երաժշտագիտության մեջ դիմում է փաստական նյութի համեմատական-պատմական երաժշտական վերլուծության, ընդգրկելով ժողովրդական, ժողովրդա-պրոֆեսիոնալ և պաշտամունքի երաժշտական արվեստի օրինակներ։ Երկրորդ բաժինը առավել մասնագիտական բնույթ է կրում և նվիրված է հայկական երաժշտության լադերի տեսական ուսումնասիրությանը։ Այստեղ, հենվելով Կո-

---

20 Х. С. Кушнарев, Вопросы истории и теории армянской мелодической музыки, Л., 1958.

միտասի ուսումնասիրությունների վրա, Քուշնարյանը կարողացել է ստեղծել հայ մոնոդիկ երաժշտության լադային կառուցվածքի մասին միասնական ուսմունք, որն ունի խոշոր գիտա-ճանաչողական և գործնական (ժամանակակից կոմպոզիտորների պրակտիկայում) նշանակություն։

Հայ երաժշտության ուսումնասիրությանը մեծ ուշադրություն է նվիրել Ա. Շահվերդյանը՝ սովետական տաղանդավոր և հեղինակավոր երաժշտագետներից մեկը։ Նրա առավել նշանակալից գործերից են «XIX—XX դարերի հայ երաժշտական կուլտուրայի պատմության ակնարկները (մինչսովետական շրջան)»[21] և Կոմիտասին նվիրված մենագրությունը[22]։

Քուշնարյանի և Շահվերդյանի աշխատությունները իրավացիորեն կարող են համարվել հայ երաժշտագիտության դասական նմուշներ։

Հայ երաժշտական թատրոնին նվիրված հիմնավոր աշխատանք է գրել Գ. Տիգրանովը[23]։ Տիգրանովի աշխատանքում մանրամասն ու խորաղնին վերլուծության են ենթարկված ինչպես ազգային բալետային և օպերային արվեստի ճանաչված կերպարները, նույնպես և հարություն է տրված հայ երաժշտական թատրոնի բազմաթիվ մոռացված կամ քիչ հայտնի էջերի։ Տիգրանովի վաստակը մասնավորապես պետք է համարել այն, որ փաստորեն սովետահայ երաժշտագետներից նա առաջինը կարողացավ բացահայտել Զուխաջյանի ստեղծագործության գեղարվեստական արժեքը և դրանով ղգալի չափով նպաստեց տաղանդավոր կոմպոզիտորի երաժշտության վերածննդին։ Տիգրանովի գրչին են պատկանում նաև Սպենդիարյանին նվիրված ծավալուն մենագրությունը և մի շարք այլ ուսումնասիրություններ։

Հայ երաժշտության պատմության սիստեմատիկ շարադրման առաջին փորձն է «Ակնարկ հայ երաժշտության պատմության» աշխատությունը[24], որ ընդգրկում է հին շրջանից մինչև մեր օրերը։ Այստեղ մշակված է ազգային երաժշտական մշակույթի պատմության հիմնական փուլերի դիտական պարբերացումը, բնութագրված է առաջատար ժանրերի զարգացումը, ինչպես և քիչ թե շատ նշանակալից կոմպոզիտորների և երաժշտական գործիչների ստեղծագործությունը։

1950—1960-ական թթ. ընդհանրացնող բնույթի աշխատությունների հետ մեկտեղ նկատվում է ձգտում դեպի հայ անցյալի, նույնպես և արդի երաժշտության առանձին հարցերի խորաղնին ուսումնասիրությունը։

Էական նշանակություն է ստանում հայ երաժշտության ժառանգության մշակումը, այդ թվում դասականների գործերի հատընտիրների, ինչպես և նրանց ստեղծագործական կենսագրությանն առնչվող նյութերի և փաստաթղթերի հրապարակումը։ Մինչև այժմ լույս են տեսել արվեստի ինստիտուտի կազմած Ա. Սպենդիարյանի երկերի լիակատար ժողովածուի 9 հատորները (1943—1960 թթ., կազմող-խմբագիր՝ Գ. Բուդաղյան) և Կոմիտասի երկերի ժողովածուի 3 հատորները (1960—1969 թթ., կազմող-խմբագիր՝ Ռ. Աթայան)։ Այս հրա-

---

21 Ա. Ի. Շահվերդյան, Հայ երաժշտության պատմության ակնարկներ, XIX—XX դդ., Երևան, 1959։ Նույնի՝ Очерки по истории армянской музыки XIX—XX вв., М., 1959.

22 А. И. Шавердян, Комитас и армянская музыкальная культура, Ереван, 1956.

23 Г. Г. Тигранов, Армянский музыкальный театр, т. 1, Ереван, 1956, т. 2, Ереван, 1960.

24 Ք. Քուշնարյան, Մ. Մուրադյան, Գ. Գյոդակյան, Ակնարկ հայ երաժշտության պատմության, Երևան, 1963։

տարակությունները ոչ միայն գիտա-ուսուցողական, այլև գեղարվեստա-գործնական մեծ արժեք ունեն։

Նույն ժամանակաշրջանում հրապարակվել են Ա. Սպենդիարյանի նամակները (կազմող՝ Ք. Գրիգորյան), ժամանակակիցների հուշերը Կոմիտասի մասին (կազմող՝ Ս. Դասպարյան), հուշեր Սպենդիարյանի մասին (կազմող՝ Ա. Թադևոսյան), Ս. Մելիքյանին նվիրված փաստաթղթերի, նյութերի և հուշերի ժողովածուն (կազմողներ՝ Ս. Մելիքյան և Ա. Թադևոսյան), երաժշտագետ Գ. Կորգանովի հոդվածների ժողովածուն (կազմող՝ Զ. Սեմյոնովա)։

Հայ նշանավոր երաժշտական գործիչներին նվիրված մենագրությունների շարքում պետք է նշել Ա. Շահվերդյանի «Կոմիտասը և հայ երաժշտական կուլտուրան», Ս. Դասպարյանի «Կոմիտաս», Ս. Մուրադյանի «Կարա-Մուրզան և բազմաձայնության ներդրումը հայ երաժշտության մեջ», Սպենդիարյանին նվիրված Ա. Շահվերդյանի, Գ. Տիգրանովի, Ա. Բարսամյանի, Ք. Գրիգորյանի, Մ. Տերյանի աշխատությունները, Ռոմանոս Մելիքյանի մասին Ռ. Գյոդակյանի, Խ. Թոոջյանի գործերը, Արմեն Տիգրանյանին նվիրված Կ. Մելիք-Վրթանեսյանի, Ռ. Աթայանի և Մ. Մուրադյանի մենագրությունները, Հարո Ստեփանյանի մասին Գ. Տիգրանովի մենագրությունը և այլն։ Ա. Խաչատրյանի մասին կապիտալ աշխատանք է գրել Գ. Խուբովը։ Խաչատրյանի ստեղծագործությանը իրենց ուսումնասիրություններն են նվիրել նաև Գ. Տիգրանովը, Դ. Ջերոտարյանը, Է. Կարագուլյանը։

Լուրջ աշխատությամբ հայ խազային նոտագրության ուսումնասիրությանն ու վերծանությանն է անդրադարձել Ռ. Աթայանը[25], միջնադարյան հայ երաժշտության քիչ ուսումնասիրված պրոբլեմներին նվիրված արժեքավոր հոդվածներով հանդես է եկել Ն. Բահմիզյանը։

1969 թ. նշանակալիորեն համալրվեց Կոմիտասին նվիրված գրականությունը նրա հոբելյանի տոնակատարության առիթով (ծննդյան 100-ամյակի)։ Առանձնապես պետք է նշել Ի. Յոլյանի «Կոմիտաս» մենագրությունը[26] և «Կոմիտասական» ժողովածուն[27], որ պատրաստել են արվեստի ինստիտուտի աշխատակիցները։ Ի. Յոլյանի մենագրությունը աչքի է ընկնում Կոմիտասի գործունեության բոլոր կողմերի հիմնավոր վերլուծությամբ, արխիվային նոր վավերագրերի օգտագործմամբ։ «Կոմիտասականում» հատուկ ուշադրության են արժանի համարյա չուսումնասիրված պրոբլեմների տեսական իմաստավորման փորձերը՝ «Կոմիտասը և հայ հոգևոր երաժշտությունը» (Ն. Բահմիզյան) և «Կոմիտասն ու դարի համաշխարհային երաժշտական արվեստը» (Գ. Գյոդակյան)։

Հայ երաժշտագետներին զբաղեցրել են նաև ազգային երաժշտության առանձին ժանրերի զարգացման պատմության հարցերը։ Երաժշտական թատրոնին նվիրված Դ. Տիգրանովի հիշատակված աշխատանքից զատ գրվել են ուսումնասիրություններ՝ նվիրված հայ դաշնամուրային երաժշտության կազմավորմանն ու զարգացմանը, կամերային անսամբլների երաժշտությանը, հայ կոմպոզիտորների կանտատային-օրատորիալ ստեղծագործությանը, XIX դա-

25 Ռ. Աթայան, Հայկական խազային նոտագրությունը (ուսումնասիրության և վերլուծության փորձ), Երևան, 1959։

26 Ի. Յոլյան, Կոմիտաս, Երևան, 1969։

27 «Կոմիտասական», ժողովածու, № 1, Երևան, 1969։

րի կամերային-երգային երաժշտությանը, ջութակային սոնատին, լարային արվեստի զարգացմանը և այլն։

Դեռևս անբավարար են լուսաբանվում սիյուրքահայ երաժշտական արվեստին առնչվող հարցերը։ Այդ բնագավառում առաջին քայլերն են կատարվում[28]։

Վերջին տարիներս զգալի աշխուժություն է նկատվում երաժշտական կրթական օջախների համար ուսումնական ձեռնարկներ ու դասագրքեր ստեղծելու ուղղությամբ։ Զգալի աշխատանք է տարել Կոմիտասի անվան Երևանի պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության և տեսության ամբիոնը։ Առաջին անգամ հայերեն լույս է տեսել հարմոնիային նվիրված դասագիրք 2 հատորով[29], Երևանի կոնսերվատորիայի դասախոսությունների հիման վրա հրատարակվել է «Հայ երաժշտության պատմություն» դասագրքի առաջին պրակը[30]։

Հայ երաժշտական գործիչները մասնավոր նախաձեռնությամբ շրջագայել են հայկական գավառները և ձայնագրել ժողովրդական երգեր։ Այդպես է կատարել իր ձայնագրությունները մեծ Կոմիտասը, հիմք դնելով հայկական երաժշտական ազգագրությանը։ Բացառություն է 1914 թ. Շիրակի գիտ. արշավախումբը, որին մասնակցել են Ս. Մելիքյանն ու Ա. Տեր-Ղևոնդյանը։ Այս արշավախումբը կազմակերպվեց Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերության որոշումով ու նյութական միջոցներով և հայ իրականության մեջ առաջինն էր, որ ձայնագրությունները կատարեց ֆոնոգրաֆի օգնությամբ։ Գիտարշավի աշխատանքների արդյունքը եղավ «Շիրակի ժողովրդական երգեր» արժեքավոր ժողովածուն[31], որը տպագրվեց նույն ընկերության ծախքով։ Իսկ Կոմիտասի մեծարժեք ձայնագրությունները մնացին ձեռագիր և մեծ մասը մատնվեց կորստի։

Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո երաժշտական ազգագրության գծով ծավալվող աշխատանքները դրվեցին պետական հիմունքների վրա։ Առաջինը Կոմիտասի աշակերտ Սպ. Մելիքյանն էր, որ տեվական աշխատանք ծավալեց այս ուղղությամբ։ 1926—1930 թթ. նա կազմակերպեց գիտական արշավախմբեր Հայաստանի շրջանները և ձայնագրեց շուրջ հազար երգ ու պարեղանակ, որոնց մեծ մասը հետագայում երկու ստվարածավալ հատորով տպագրեց ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորը։ Նույն տարիներին Սպ. Մելիքյանը և Գ. Բարդաշյանը ձայնագրեցին նաև «Վանա երգեր» ժողովածուի երկու պրակներում ամփոփված 100 երգ[32]։

Այս նույն տարիներին դեպի Հայաստանի շրջանները գիտական արշավախմբեր կազմակերպեց նաև Լենինգրադի կոնսերվատորիայի պրոֆեսոր Ք. Քուշնարյանը։

---

28 Ց. Բրուտյան, Սիյուրքի հայ երաժիշտները, Երևան, 1968։

29 Է. Փաշայան, Ներդաշնակագիտության դասագիրք, Երևան, գիրք I, 1960, գիրք II, 1966։

30 Ա. Բարսամյան, Մ. Հարությունյան, Հայ երաժշտության պատմություն, I մաս, Երևան, 1968։

31 «Ժողովրդական երգերի ազգագրական ժողովածու», հատ. 1, Շիրակի երգեր, հավաքեցին ֆոնոգրաֆով Սպ. Մելիքյան և Ան. Տեր-Ղևոնդյան, ձայնագրեց Սպ. Մելիքյան, Թիֆլիս, 1917։

32 «Վանա ժողովրդական երգեր», Երևան, պրակ I, 1927, պրակ II, 1928։

Հաջորդ տասնամյակում երաժշտական-ազգագրական աշխատանքները կենտրոնացան Երևանի պետական կոնսերվատորիային կից երաժշտական գիտահետազոտական կաբինետում, որի ղեկավարն էր երաժշտագետ-կոմպոզիտոր Ա. Քոչարյանը։ 1936 թ. կազմակերպվեց կաբինետի գիտարշավը դեպի Շամշադինի շրջան։ Ֆոնոգրաֆի գլանների վրա ավելի քան 100 երգ ձայնագրելուց բացի արշավախումբը միաժամանակ մանրակրկիտ ուսումնասիրություն ծավալեց գյուղերի երաժշտական կենցաղը բացահայտելու, երաժշտական գործիքների հավաքածու կազմելու ուղղությամբ։

1930-ական թթ. վերջին Ռ. Մելիքյանի անվան երաժշտական գիտահետազոտական կաբինետում աշխատանքի ընդունվեց կոմպոզիտոր-ջութակահար Ջիվան Կիրակոսյանը, որն սկսեց ձայնագրություններ կատարել իր ստեղծած ձայնագիր ապարատով։ Կարճ ժամանակում Ա. Քոչարյանի ղեկավարությամբ կատարվեց շուրջ 1000 ձայնագրություն։ Դրանով հիմք դրվեց հայ ժողովրդական և գուսանա-աշուղական երաժշտության ձայնադարանին։ Ձայնագրությունների թվում կային հայ ժողովրդական և գուսանա-աշուղային երաժշտության տարբեր ժանրերի նմուշներ, ինչպես և աշուղական սիրավեպերի ամբողջական պատումներ՝ երգվող հատվածներով, և ապա՝ «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոսի մի պատումը, նույնպես երգվող հատվածներով։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին այս աշխատանքը, դժբախտաբար, ընդհատվեց և վերսկսվեց միայն 1948 թ., ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորի երաժշտության բաժնում։ Արշավախմբերը եղան Հայաստանի մի շարք շրջաններում, ինչպես և Վրաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի հայաբնակ վայրերում։ Արշավախմբերից մի քանիսը կազմակերպվեցին Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ։ Ձայնագրությունները կատարվեցին մագնիտոֆոնային ժապավենների վրա և տարեցտարի կուտակվելով, արդեն հասնում են մի քանի հազարի։ Արվեստի ինստիտուտում գործող ժողովրդական երաժշտության կաբինետի հիման վրա 1965 թ. ստեղծվեց ժողովրդական երաժշտության սեկտոր, որը շարունակեց արշավների կազմակերպումը։

Այս տարիներին կազմակերպվեց նաև Լենինգրադի Պուշկինի տան ձայնադարանում պահպանվող այն ձայնագրությունների պատճենահանումն ու փոխադրումը Երևան, որոնք 1927—1929 թթ. կատարվել էին Քուշնարյանի ղեկավարությամբ։ Այսպիսով, ձայնադարանի ֆոնդին ավելացավ մագնիտոֆոնային ժապավենների վրա վերաձայնագրված ևս 500 ձայնագրություն։ Նախորդ տարիներին Հայաստանի շրջաններում, եղբայրական հանրապետությունների հայաբնակ շրջաններում և Երևանում կատարված ձայնագրությունների ընդհանուր թիվն արդեն անցել է 6500-ից։

Ժամանակ առ ժամանակ գիտարշավներ են կազմակերպել նաև Հայաստանի կոմպոզիտորների միությունը, ժողովրդական ստեղծագործության հանրապետական տունը և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան։ Ձայնագրություններ են կատարվում նաև ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի գիտարշավների ընթացքում։

Վերը նշված հրատարակություններից բացի, Սպ. Մելիքյանը 1931 թ. իրագործեց Կոմիտասի «Հայ ժողովրդական երգերի» ազգագրական առաջին

ժողովածուի[33] հրատարակությունը (255 երգ)։ Ժողովածուում դետեղված երգերը դեռևս 1904 թ. նա արտագրել էր Կոմիտասի ձեռագրերից և օգտագործելու համար հետը տարել Բեռլին։ Հայկական ձայնանիշերից փոխադրելով եվրոպականի, նա դրանց վրա ավելացրել էր «Շար Ակնա ժողովրդական երգերի» տետրի պարունակած երկերը, որոնք լույս էին տեսել Հ. Ճանիկյանի «Հնություններ Ակնա» գրքում (Թիֆլիս, 1895) հավելվածի ձևով։ Սա առաջին խոշոր ժողովածուն էր Կոմիտասի ձայնագրած երգերից, որոնց թիվը հասել է չորս հազարի։ Ժողովածուին կազմողը կցել է առաջաբան և ձայնագրություններ։

Կոմիտասի «Հայ ժողովրդական երգեր» ալբոմային ժողովածուի երկրորդ գիրքը[34] ամփոփում է Կոմիտասի 1891 թ. անդրանիկ ժողովածուն (37 երգ) և նրա՝ Հայաստանում (1913 թ. վերջին) շրջագայության ընթացքում կատարած ձայնագրությունների ծոցատետրի 60 երգ։ Բացի այդ, մի քանի երգ էլ վերծանվել ու նոտագրվել էր ձայնասկավառակից։ Ժողովածուն կազմել է Մ. Աղայանը՝ վերոհիշյալ երգերը հայկականն ձայնանիշերից փոխադրելով եվրոպականի, գրելով ներածություն, կենսագրական ակնարկ և ծանոթագրություններ։

Սովետական տարիներին Սպ. Մելիքյանի ձայնագրած երգերից կազմվեց և հրատարակվեց «Հայ ժողովրդական երգեր և պարեղանակներ» ժողովածուն երկու հատորով[35]։ Կոմիտասի աշակերտ Հ. Հարությունյանի «Մանյակ» երգերի ժողովածուն[36] պարունակում էր 141 երգ ու պարեղանակ։

Արվեստի ինստիտուտի ձայնադարանի նյութերից կազմվել և հրատարակվել է Վ. Սամվելյանի «Հայ ժողովրդական երգեր» (սովետական շրջան) ժողովածուն[37], որը պարունակում է 250 երգ։

Մ. Աղայանի և երգիչ Շ. Տալյանի ջանքերով կազմվել և հրատարակվել են նաև «Սայաթ-Նովա»[38] և «Ջիվանի»[39]։ Առաջինը պարունակում է 30, իսկ երկրորդը՝ 80 երգ։ Բացի դրանցից, հրապարակվել են նաև Գուսան Հավասու «Իմ քնարը»[40], Գուսան Աշոտի «Երգերի ժողովածուն»[41], Գուսան Շերամի «Երգերը»։

Հրատարակության է հանձնված Մ. Լուլեջյանի «Նոր Նախիջևանի ժողովրդական երգեր» ժողովածուն (100 երգ), նախապատրաստվում են հրատարակության Ա. Քոչարյանի «Հայ գուսանական երգերը», Մ. Բրուտյանի «Հայ ժողովրդական երգերը» և Մ. Թումաճանի «Հայրենի երգ և բան» հավաքածուի առաջին հատորը։

---

33 Կոմիտաս, Ժողովրդական երգեր, Երևան, 1931։

34 Կոմիտաս, Ժողովրդական երգեր, Ալբոմային ժողովածու, կազմեց՝ Մ. Աղայան, հատ. I, Երևան, 1950։

35 Սպ. Մելիքյան, Հայ ժողովրդական երգեր և պարեղանակներ, կազմեց՝ Մ. Աղայան, Երևան, հատ. I, 1949, հատ. II, 1955։

36 Հ. Հարությունյան, Մանյակ, ժողովածու հայ ժողովրդական երգերի, խմբագիր՝ Ռ. Ադայան, Երևան, 1958։

37 Վ. Սամվելյան, Հայ ժողովրդական երգեր (սովետական շրջան), Երևան, 1961։

38 «Սայաթ-Նովա», կազմեցին՝ Մ. Աղայան և Շ. Տալյան, Երևան, 1946, երկրորդ հրատ՝ 1963։

39 «Ջիվանի», կազմեցին՝ Մ. Աղայան և Շ. Տալյան, Երևան, 1955։

40 Գուսան Հավասի, Իմ քնարը, կազմեց՝ Շ. Տալյան, Երևան, 1961։

41 Գուսան Աշոտ, Երգերի ժողովածու, խմբագիր՝ Ա. Մնրանդուլյան, Երևան, 1955։

Թատերագիտություն. Կարելի է վստահորեն ասել, որ ձևավորվել է սովետական իրականության տարիներին։ Ճիշտ է, մինչ այդ էլ եղել են և՛ ազգային թատերական քննադատություն, և՛ ազգային թատերական արվեստին նվիրված առանձին աշխատություններ, բայց թատերագիտությունն իբրև այդպիսին, լայն առումով, արվեստաբանության մյուս ճյուղերի հետ միասին ձևավորվել է սովետական տարիներին։ Նորաստեղծ դիտության առջև ծառացած են եղել մի շարք խնդիրներ։ Դրանցից կարևորագույններն էին՝ հայ թատրոնի բաղմադարյան պատմության ուսումնասիրությունը և սովետահայ թատրոնի ստեղծագործական փորձի արվեստաբանական իմաստավորումն ու ընդհանրացումը։

Հայ հին թատրոնի պատմության ուսումնասիրության ասպարեզում պետք է նշել Գարեգին Լևոնյանի «Թատրոնը հին Հայաստանում» ուսումնասիրությունը, որ թեև չունի նյութի լայն ընդգրկում, բայց արժեքավոր է իբրև այդ բնագավառի հետազոտության առաջին փորձ։ Հայ հին թատրոնի պատմության համակողմանի ուսումնասիրությունը եղավ Դևորգ Գոյանի «Հայ թատրոնի 2000 տարին» երկհատոր աշխատությունը[42]։

Ազգային թատրոնի և թատերագրության հետագա շրջանների ուսումնասիրությունը զբաղեցրել է ուրիշ թատերագետների, հատկապես Վ. Թերզիբաշյանին և Գ. Ստեփանյանին։ Թատերագիտության մեջ ծանրակշիռ ներդրում են Վ. Թերզիբաշյանի «Հայ դրամատուրգիայի պատմությունը» և Գ. Ստեփանյանի «Արևմտահայ թատրոնի պատմության ուրվագիծը»[43]։ Երկուական հատորից բաղկացած այս ուսումնասիրություններն առաջին անգամ լայն ընդգրկումով, հասարակական հոսանքների բարդ կապակցությունների մեջ ներկայացնում են արևելահայ և արևմտահայ թատրոնի ու թատերագրության զարգացման պատմությունը XVIII և XIX դարերում։

Թատերագիտական մի ամբողջ շարք մենագրական աշխատություններ նվիրված են ազգային թատրոնի ամենից նշանավոր գործիչների կյանքին և արվեստին։ Դրանց թվում առանձնանում են Ռ. Զարյանի երկհատոր աշխատությունը, որ նվիրված է Պետրոս Ադամյանին, նույնի «Սիրանույշ» մենագրությունը, Ս. Մելիքսեթյանի «Հովհ. Աբելյան», Հ. Հովհաննիսյանի «Մարտիրոս Մնակյան»[44] և այլ ուսումնասիրություններ։ Հայ թատերագիտության ուշագրավ էջերից են ազգային թատրոնի շեքսպիրյան ավանդների արվեստաբանական իմաստավորումները։ Դրանց թվին են պատկանում Հ. Մամիկոնյանի հոդվածները, Ռ. Զարյանի «Ադամյանի Շեքսպիրը» աշխատությունը, Լ. Սամվելյանի «Ադամյանի շեքսպիրյան կերպարները» մենագրական աշխատությունը, «Շեքսպիրական»[45] խորագրով լույս տեսնող հետազոտությունների ժողովածուները։ Վերջիններս, որ հրատարակվում են պարբերաբար, ստեղծվում են արվեստի ինստիտուտում կազմակերպված հայ շեքսպիրագիտական կենտրոնի ուժերով։ Ստեղծված է նաև շեքսպիրագիտական բազմալեզու գրադարան։

---

42 Георг Гоян, 2000 лет армянского театра, тт. 1. 2. М., 1952.

43 Վահրամ Թերզիբաշյան, Հայ դրամատուրգիայի պատմություն, հատ. I, Երևան, 1959, հատ. II, 1964։ Գառնիկ Ստեփանյան, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատ. I, Երևան, 1962, հատ. II, 1969։

44 Ռուբեն Զարյան, Թատերական դիմանկարներ, Երևան, 1956։ Նույնի՝ Սիրանույշ, Երևան, 1959, Պետրոս Ադամյան, հատ. II, Երևան, 1960, հ. I, Երևան, 1961։ Սարգիս Մելիքսեթյան, Հովհաննես Աբելյան, Երևան, 1954։ Հ. Հովհաննիսյան, Մարտիրոս Մնակյան, Երևան, 1969։

45 «Շեքսպիրական», գիրք I, Երևան, 1967, գիրք II, 1968, գիրք III, 1970։

Սովետահայ թատրոնի անցած ճանապարհի և ստեղծագործական փորձի ընդհանրացմանը շատ ջանքեր են նվիրել և՛ ավագ, և՛ նոր սերնդի թատերագետները։ Դեռևս 1941 թ. Ս. Մելիքսեթյանը լույս է ընծայել «Մեր թատրոնի ուղին» գիրքը (Սունդուկյանի անվան թատրոնի անցած ճանապարհն ընդհանրացնելու առաջին փորձը), իսկ 1960 թ.՝ «Սովետահայ թատրոնի պատմության ուրվագիծը»[46]։ Սովետահայ թատրոնի պատմությանը ուսումնասիրություն է նվիրել նաև Սուրեն Հարությունյանը (առայժմ լույս է տեսել առաջին հատորը, որ ընդգրկում է 1920—1932 թթ.)[47]։ Այստեղ փաստական հարուստ նյութի հիման վրա բացահայտվում է այն նորը, որ իր հետ բերեց սովետական տարիների հայ թատրոնը գաղափարական և գեղարվեստական առումներով։

Հայ թատերագիտությունը հարուստ է բազմաթիվ այլ աշխատություններով, որոնք լուսաբանում են սովետական թատրոնի ու թատերագրության հետ կապված այլևայլ խնդիրներ, նշանավոր դերասանների ու ռեժիսյորների ստեղծագործությունը։

Հայ թատերագիտական մտքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ 1944 թ. Երևանում բացված թատերական ինստիտուտը, որ տվեց թատերագետների մի քանի շրջանավարտներ։ Այդ շրջանավարտներից գոյացավ թատերագետների նոր սերունդը, որին վիճակվեց ակներև դեր կատարել հանրապետության թատերական կյանքում (Գ. Զարեյան, Լ. Խալաթյան, Լ. Սամվելյան, Բ. Հարությունյան, Լ. Հախվերդյան, Ս. Ռիզա, Ա. Հունանյան և ուրիշներ)։ Նրանցից շատերը դարձան հեղինակներ բազմաթիվ հետազոտությունների, որոնք արծարծում են ռեժիսուրայի և թատերագրության, դերասանական նոր խաղաոճի, հայ-ռուսական թատերական կապերի, ասմունքի արվեստի, բեմանկարչության հետ կապված խնդիրներ։ «Ռուս դրամատուրգիան հայ բեմում», «Մեր օրերի հայ դրամատուրգիան», «Բեմանկարիչ Մելիքսեթ Սվախչյան», «Արմեն Գուլակյան», «Շեքսպիրը հայ բեմում», «Սուրեն Քոչարյանի արվեստը», «Գորկու դրամատուրգիան հայ թատրոնում», «Կլասիկան և մեր օրերը», «Սովետահայ թատրոնի տարեգրությունը», «Հրաչյա Ներսիսյան», «Տիգրան Շամիրխանյան», «Լևոն Քալանթար», «Ռեժիսուրան հայ թատրոնում» ահա ոչ լրիվ ցանկն այն գրքերի ու գրքույկների, որ հրապարակել են այդ սերնդի թատերագետները՝ հարստացնելով թատերական արվեստին վերաբերող հայկական գրադարանը։

Գլխավորապես այդ ուժերից է բաղկացած արվեստի ինստիտուտի թատերական բաժինը։ Բաժնի ջանքերով լույս տեսավ «Հայ սովետական թատրոնի պատմություն (1917—1965)»[48] գիրքը՝ ամենածավալուն աշխատությունը, որ նվիրվել է այդպիսի թատերական արվեստին։

Հայ թատերագիտությանը սպասում են արծարծման և լուծման կարոտ ուրիշ խնդիրներ։ Անելիքները շատ են հայ հին և միջնադարյան թատրոնի պատմության ուսումնասիրության բնագավառում, իր հետազոտողներին է սպասում թատրոնի պատմության անմիջաբար հեղափոխությանը նախորդող տասնամյակների ժամանակաշրջանը, ուսումնասիրության և արվեստաբանական

---

46 С. Меликсетян, Путь нашего театра, Ереван, 1941. Ս. Մելիքսեթյան, Սովետահայ թատրոնի պատմության ուրվագիծ, Երևան, 1960։

47 Սուրեն Հարությունյան, Սովետահայ թատրոնի պատմություն, հատ. I, Երևան, 1968։

48 «Հայ սովետական թատրոնի պատմություն», Երևան, 1967։

իմաստավորման կարոտ շատ բան կա հատկապես արդի սովետական թատերական արվեստում։ Այս և ուրիշ խնդիրներ այժմ զբաղեցնում են հայ թատերագիտական միտքը։

Կերպարվեստագիտություն. Արվեստագիտության այս բնագավառը սկիզբ է առել սովետական իշխանության տարիներին և անցած տասնամյակների ընթացքում զարգացել ու իր հիմնավոր տեղն է գրավել հասարակական գիտությունների շարքում։

Նախասովետական ժամանակներում այդ բնագավառում նշանակալից գործեր են կատարել Գ. Հովսեփյանը, Ա. Ջոպանյանը, Ն. Ակինյանը[49], որոնց հոդվածներում առաջ են քաշվել պատմական, աղգագրական, հնագիտական, ինչպես նաև որոշ արվեստաբանական հարցադրումներ։ Հայտնի են նաև կերպարվեստի հարցերին նվիրված Վ. Սուրենյանցի, Ա. Շիրվանզադեի, Գ. Բաշինջաղյանի[50] և ուրիշների հոդվածները։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Երևանում բացվեց Հայաստանի պետական պատկերասրահը, որն աստիճանաբար կարևոր դեր ստանձնեց արվեստաբանության զարգացման գործում։ Հետագայում արվեստաբանական միտքը որոշակի աշխուժացում ապրեց ԳԱ արվեստների տեսության և պատմության սեկտորի հիմնադրումով, որտեղ տարիներ անց կերպարվեստագիտությունը ստացավ շոշափելի կայուն կերպարանք, ընդգրկեց բոլոր ճյուղերը՝ գեղանկարչություն, գրաֆիկա, քանդակագործություն, կիրառական արվեստ։

Հայ կերպարվեստի պատմությանը նվիրված առանձին աշխատություն գոյություն չունի։ 1930-ական թթ. առաջին փորձն արվեց ուրվագծելու հայ կերպարվեստի անցած ուղին[51]։ Հետագայում նկարիչ Ռ. Շիշմանյանը ուսումնասիրության նյութ դարձրեց հայ բնանկարիչների ստեղծագործությունը[52]։

Սովետահայ կերպարվեստագիտության առաջնահերթ պրոբլեմներից է եղել անցյալի հայ կերպարվեստի ուսումնասիրության հարցը։ Առաջին հերթին պետք է հիշատակել Լ. Դուրնովոյի ուսումնասիրությունները՝ նվիրված հայկական միջնադարյան արվեստին, որոնք փաստորեն առաջին գիտական ընդհանրացնող փորձերն էին այդ ուղղությամբ[53]։ Լ. Դուրնովոն առաջինն էր, որ միջնադարյան ձեռագրերի մանրանկարչական արվեստը դասակարգեց ըստ դպրոցների, բնորոշեց նրանց առանձնահատկությունները, լրացրեց մանրանկարիչների ցանկը նոր անուններով։ Լ. Դուրնովոն սովետահայ կերպարվեստագիտության մեջ ներմուծեց մանրանկարչության ուսումնասիրման կարևորագույն ավանդներ, որոնք շարունակելու եկան երիտասարդները։ Հատկապես

---

49 Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, 5 պրակ, 1935—1951։ Ա. Ջոպանյան, Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը, Փարիզ, 1910։ Ն. Ակինյան, Հովնաթան Նաղաշ և Նաղաշ Հովնաթանյանք և իրենց բանաստեղծական և նկարչական աշխատությունք, Վիեննա, 1911։

50 Վ. Սուրենյանց, Հայկական ճարտարապետության տեղը գեղարվեստի պատմության մեջ, «Վտակ», ժողովածու, Թիֆլիս, 1901։ Ա. Շիրվանզադե. Կովկասյան ցուցահանդես, «Արձագանք», Թիֆլիս, 1889, № 35, Գեղարվեստական պատկերահանդես, «Արձագանք», 1890, № 2 և այլն, Գ. Բաշինջաղյան, Նկարչի կյանքից. Երևան, 1950։

51 «Очерки по истории и искусства Армении», М.—Л., 1939.

52 Ռ. Շիշմանյան, Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, 1958։

53 Լ. Դուրնովո, Հայկական մանրանկարչություն, Երևան, 1957, 1967, 1969. L. Durnovo, Miniatures Armeniennes. Paris, 1960.

նշանակալից են մանրանկարչության առանձին դպրոցներին նվիրված մենագրությունները[54]։ Միաժամանակ ընդլայնվեցին միջնադարյան հայ արվեստի ուսումնասիրության շրջանակները և դիտահետազոտական ուսումնասիրությունների նյութ դարձան այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են հայկական գարդանկարչությունը[55], որմնանկարչությունը[56], քանդակագործությունը[57], խաչքարերն ու կոթողները, միջնադարյան հայ ճարտարապետության և կերպարվեստի մի շարք ճյուղերի սինթեզի հարցերը[58]։ Առաջին անգամ ուսումնասիրության նյութ դարձավ XVII—XVIII դարերի և XIX դարի սկզբի հայ կերպարվեստը[59]։ Այս շրջանի դաղթօջախների արվեստի բնութագրությամբ ժամանակի հայ կերպարվեստը բնորոշվեց որպես միջնադարը նոր շրջանի հետ կապակցող կարևորագույն օղակ։

Սովետահայ կերպարվեստագիտության ուշադրության կենտրոնում են եղել XIX դարի և XX դարի սկզբի հայ կերպարվեստի առնչությունները այլ ժողովուրդների, հատկապես ռուս ժողովրդի արվեստի հետ[60], ինչպես և առանձին խոշոր գործիչների ստեղծագործական կյանքի ուսումնասիրությունը[61]։ Լույս են տեսել նաև սովետահայ արվեստի ականավոր դեմքերին նվիրված առանձին մենագրություններ[62]։

Բոլորովին նոր երևույթ էր կիրառական արվեստի ուսումնասիրությունը։ Եթե անցյալում ժողովրդական արվեստի այդ կարևոր բնագավառը ուշադրություն էր դրավում միայն հնագիտական ու ազգագրական տեսակետից, ապա այժմ ուշադրության կենտրոն են դառնում առանձին բնագավառներին առնչվող արվեստաբանական հարցերը[63]։

Այս ամենը կայուն նախադրյալներ ստեղծեցին, որպեսզի նախաձեռնվի մի այնպիսի ընդհանրացնող աշխատանք, ինչպիսին է «Հայ կերպարվեստի

---

54 Լ. Ազարյան, Կիլիկիայի մանրանկարչությունը XII—XIII դարերում, Երևան, 1964։ Ա. Ավետիսյան, Հայ մանրանկարչության Գլաձորի դպրոցը (տպագրվում է)։

55 Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955։

56 Л. Дурново, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957.

57 Բ. Առաքելյան, IV—VII դարերի հայկական պատկերաքանդակները, Երևան, 1943։

58 Ստ. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1961։

59 Գ. Լևոնյան, Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», 1938, № 1, 2, 4։ Р. Дрампян, Братья Акоп и Агафон Овнатаняны, каталог, М., 1952; М. Казарян, Художники Овнатаняны, М., 1968.

60 Մ. Սարգսյան, Հայկական և ռուսական կերպարվեստի կապերը XIX դարում և XX դարի սկզբին, Երևան, 1951։

61 Ռ. Դրամբյան, Եղիշե Թադևոսյան, Երևան, 1956, ապա՝ Մոսկվա, 1957։ Մ. Ղազարյան, Վարդգես Սուրենյանց, Երևան, 1960, ապա՝ 1962։ Վ. Հարությունյան, Վարդգես Սուրենյանց, Երևան, 1960։ Մ. Սարգսյան, Գևորգ Բաշինջաղյան, Երևան, 1957։ Նույնի՝ Հովհաննես Այվազովսկի (տպագրվում է)։ Ռ. Շիշմանյան, Էդգար Շահին, Երևան, 1956։

62 Ռ. Դրամբյան, Մարտիրոս Սարյան, Երևան, 1960։ Նույնի՝ Հակոբ Կոջոյան, Մ., 1960։ Ռ. Պարսամյան, Ստեփան Աղաջանյան, Երևան, 1963։ Ե. Մարտիկյան, Ստեփան Աղաջանյան, Երևան, 1957։ Նույնի՝ Այծեմիկ Ուրարտու, Երևան, 1962։ Ե. Կուրդոյան, Սուրեն Ստեփանյան, Երևան, 1961։ Վ. Մաթևոսյան, Սեդրակ Առաքելյան, Երևան, 1963։ Մ. Այվազյան, Գարրիել Գյուրջյան, Երևան, 1957։ Լ. Խալաթյան, Սարյանը և թատրոնը, Երևան, 1960։ Մ. Ղազարյան, Գրիգոր Խանջյան, Երևան, 1969 և այլն։

63 Л. Дурново, Армянская набойка, М., 1953. Վ. Թեմուրճյան, Գորգագործությունը Հայաստանում, Երևան, 1953։ Ս. Դավթյան, Հայկական ժանյակ, Երևան, 1967 և այլն։

պատմություն» խորագիրը կրող եռահատոր աշխատությունը (հեղինակների կոլեկտիվ)։

Կինոգիտություն. ինչպես և կինոքննադատություն մինչհեղափոխական Հայաստանում չի եղել, քանի որ չի եղել կինեմատոգրաֆիա։ Հայկական կինոարվեստը՝ գեղարվեստական և դոկումենտալ, սովետական ժամանակի ծնունդ է։ Առաջին տարիներին կինոքննադատությունը կրում էր, եթե կարելի է այսպես ասել, սիրողական բնույթ։ Ոչ փորձ կար, ոչ էլ մասնագետ կինոքննադատներ։ Կինոարվեստի բուռն զարգացումը իր հետ բերեց և կինոքննադատություն, որի առաջին ներկայացուցիչներն էին հայ գրողները և իրենք՝ կինոաշխատողները։ Պետք է ասել, որ կինոգիտությունը մեզանում ձևավորվեց բավականաչափ ուշ։ Դրա պատճառը ոչ միայն կադրերի բացակայությունն էր, այլև այն, որ ուսումնասիրության առարկան՝ հայկական կինոարվեստը, գտնվում էր ձևավորման ու զարգացման ընթացքում և դեռ չէր կուտակել իր պատմությունը։ Կինոարվեստի առջև ծառացած խնդիրները կարողանում էր լուծել կինոքննադատությունը։ Այսպես շարունակվեց մինչև որ հայկական կինեմատոգրաֆիան ավարտեց իր զարգացման նախապատերազմյան շրջանը և ձևավորվեց որպես ինքնուրույն ազգային արվեստ, որի պատմությունն արդեն ենթակա էր ուսումնասիրության և գիտական ամփոփման։

Հայկական կինոյի անցած ուղին իր ուրվագծային արտացոլումը գտավ առաջին անգամ Գ. Զախիրյանի և Դ. Դզնունու աշխատություններում[64], որոնց մեջ գերիշխում էր փաստագրական նյութը։ Կինոգիտության կազմավորման համար սա անհրաժեշտ ու անխուսափելի մի փուլ էր, որից հետո միայն հնարավոր եղավ գիտականորեն մոտենալ հայկական կինոյի պատմության խնդիրներին։ Գործը դժվարանում էր նաև այն պատճառով, որ հանրապետությունում և նրանից դուրս չկար որևէ գիտական օջախ, որ կբաղվեր մասնագետներ պատրաստելով, հայ կինեմատոգրաֆիայի պատմության ուսումնասիրությամբ։

Այդ շրջանում, ինչպես և հետագա տարիներին, մեծ դեր կատարեց «Սովետական արվեստ» ամսագիրը, որի էջերում պարբերաբար տպագրվել են հոդվածներ հայկական կինոարվեստի պատմության վերաբերյալ, հայկական լավագույն ֆիլմերի, առաջատար կինոռեժիսյորների, դերասանների մասին։

Միակ գիտական օջախը, որ սիստեմատիկաբար զբաղվեց կինոյի պատմության ուսումնասիրությամբ, դարձավ արվեստի ինստիտուտի փոքրաթիվ կինոխումբը։ Կինոխմբի ջանքերով հրատարակվեցին «Հայկական կինոարվեստ» ժողովածուի երկու հատոր[65], կինոյի պատմությունը ներկայացվեց ոչ միայն իր փաստական կողմով, այլև արվեստաբանական լուսաբանությամբ։ Հայկական կինոարվեստի առնչությունները թատրոնի, հայ դասական գրականության հետ, կինոռեժիսուրայի, կինոդրամատուրգիայի ուրույն հարցերը բազմակողմանիորեն շոշափվեցին այդ գրքերում, որի հեղինակներն էին Գ. Զախիրյանը, Դ. Դզնունին, Լ. Հախվերդյանը, Ս. Ռիզաևը և ուրիշներ։ «Հայկական կինոարվեստ» ժողովածուի օրինակով 1962 թ. Մոսկվայի «Восточная литература» հրատարակչությունը լույս ընծայեց ստվարածավալ մի ժողովա-

---

64 Գ. Զ ա խ ի ր յ ա ն, Հայ կինոյի զարգացման ուղիները, Երևան, 1927։ Դ. Դ զ ն ու ն ի, Ակնարկներ հայ կինոյի պատմության, Երևան, 1961։

65 «Հայկական կինոարվեստ» (ժողովածու), Երևան, գիրք 1, 1959, գիրք II, 1961։

ծու[66]։ Այս բոլորը հնարավորություն ստեղծեցին, որ դրվի հայկական գեղարվեստական կինոյի 40-ամյա պատմությունը ամփոփող մի աշխատություն[67]։

Հայ կինոգիտությունը մեր արվեստագիտության ամենաերիտասարդ ասպարեզն է, որի գիտական կադրերը դեռ նոր են պատրաստվում։ Կինոարվեստի զարգացումը, անշուշտ, խթան կդառնա, որ մեր կինոգիտությունը ամուր կանգնի հայ արվեստագիտության այլ ճյուղերի կողքին։

---

66 «Кинематография Армении», М., 1962.

67 Сабир Ризаев, Армянская художественная кинематография, Ереван, 1963.